«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
"London Business Group" JV LLC
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel. (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուրբան Կայուն Զարգացման Հիմնադրամի Ղեկավարությանը և Հոգաբարձուների Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Ուրբան Կայուն Զարգացման Հիմնադրամի (այսուհետ նաև Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (այսուհետ նաև ՓՄԿ ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող են ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ

19 հունվարի, 2023 թ.

Աուդիտի ղեկավար
Մ. Խոջայան

Տնօրեն
Տ. Զորյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանո-թագր.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	8,468	10,542
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*8,468*	*10,542*
Ընթացիկ ակտիվներ			
Ապրանքներ	5	57	57
Դեբիտորական պարտքեր	6	1,512	2,985
Տրված կանխավճարներ	6	40	111
Դրամական միջոցներ	7	53,067	37,546
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*54,676*	*40,699*
Ընդամենը ակտիվներ		63,144	51,241
Կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ			
Կուտակված շահույթ		-	-
Ընդամենը սեփական կապիտալ		-	-
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ փոխառություններ			-
Ակտիվներին վերաբերվող շնորհներ	8	8,468	10,542
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*8,468*	*10,542*
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	6	5,208	13
Եկամուտներին վերաբերող շնորհներ	8	49,468	40,686
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*54,676*	*40,699*
Ընդամենը պարտավորություններ		63,144	51,241
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		63,144	51,241

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գործադիր տնօրեն
Ն. Ղազախեցյան

Գլխավոր հաշվապահ
Կ. Ղարիբյան

19 հունվարի, 2023 թ.

ՈՒՐԲԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
URBAN SUSTAINABLE DEVELOPMENT FOUNDATION
Հիմնադրամ
Foundation
G.S.
01549618
ՀԱ «ՈՒՐԲԱՆ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներ			
Եկամուտ ճանաչված շնորհներ	9	99,371	44,589
Այլ եկամուտներ	10	30,821	54,284
		130,192	98,873
Ընդամենը եկամուտներ			
Ծախսեր			
Իրականացված ծրագրեր	11	(67,873)	(49,283)
Կառավարման և վարչական ծախսեր	12	(45,516)	(48,287)
Այլ ծախսեր	13	(16,492)	(961)
Ընդամենը ծախսեր		(129,881)	(98,531)
Զուտ եկամուտ (վնաս)		311	342
Ֆինանսական եկամուտներ	14	4	-
Ֆինանսական ծախսեր	15	(315)	(342)
Ֆինանսական գործունեության արդյունք		(311)	(342)
Տարվա զուտ շահույթ (վնաս) մինչև շահութահարկը		-	-
Շահութահարկ		-	-
Տարվա զուտ շահույթ (վնաս)		-	-

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գործադիր տնօրեն
Ն. Ղազախեցյան

Գլխավոր հաշվապահ
Կ. Ղարիբյան

19 հունվարի, 2023 թ.

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Սկզբնական մնացորդ	7	37,546	5,496
Գործառնական գործունեություն			
Մուտքեր գործառնական գործունեությունից			
Ստացված շնորհներ		106,074	89,693
Այլ մուտքեր		26,339	49,983
Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից		132,413	139,676
Ելքեր գործառնական գործունեությունից			
Ձեռքբերված ապրանքների դիմաց		79	120
Կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց		14,944	8,826
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ		57,182	63,978
Սոցիալական ապահովագրության վճարումներ		1,004	617
Հարկերի վճարում		14,371	20,174
Այլ ելքեր գործառնական գործունեությունից		13,731	3,566
Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից		*101,311*	*97,281*
Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից		31,102	42,395
Ներդրումային գործունեություն			
Մուտքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների իրացում		-	-
Մուտքեր ներդրումային այլ գործունեությունից		-	-
Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից		-	-
Ելքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում		-	11,095
Ելքեր ներդրումային այլ գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից		-	*11,095*
Զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից		-	(11,095)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

(Շարունակություն)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեություն			
Մուտքեր ֆինանսական գործունեությունից			
Վարկերի և փոխառությունների ստացում		-	7,052
Մուտքեր ֆինանսական այլ գործունեությունից		4	-
Ընդամենը մուտքեր ֆինանսական գործունեությունից		*4*	*7,052*
Ելքեր ֆինանսական գործունեությունից			
Վարկերի և փոխառությունների մարում		315	7,394
Տոկոսների վճարում		-	-
Ելքեր ֆինանսական այլ գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր ֆինանսական գործունեությունից		*315*	*7,394*
Զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		(311)	(342)
Դրամական միջոցների փոփոխություն		30,791	30,958
Արտարժութային միջոցների փոխարժեքային տարբերության արդյունք		(15,270)	1,092
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	7	53,067	37,546

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գործադիր տնօրեն
Ն. Ղազախեցյան

Գլխավոր հաշվապահ
Կ. Ղարիբյան

19 հունվարի, 2023 թ.